## Դրամաշնորհային հաշվետվություն N 2

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | Տարեցների և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ |
| **Դրամաշնորհի N** | 1032-11002/24 ԿՀ |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 03.01.2024-31.12.2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.04.2024- 30.06.2024 |
| **Ներկայացման օր** | 10.07.2024 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Կարինե Կուրղինյան<br>Ծրագրի համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

| |
|---|
| 2024 թվականի երկրորդ եռամսյակի ընթացում Հայկական Կարմիր խաչի ընկերությունը շարունակել է Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում տնային խնամքի ծառայության մատուցումը՝ շահառուների թիվը նախորդ եռամսյակի 30-ից հասցնելով 46-ի: Աշխատակազմը, ակտիվ համագործակցելով միասնական սոցիալական ծառայության աշխատակիցների հետ, փորձել է խնամքի ծառայության մեջ ընդգրկել միայնակ տարեցների, ովքեր ինքնուրույն դժվարանում են իրականացնել ինքնախնամքը, կարիք ունեն աջակցության՝ տնային սպասարկման, կենցաղային հարցերի կազմակերպման, գնումների, ինչպես նաև անհատական անձնական խնամքի կազմակերպման հարցերում: Բազմաթիվ տունայցեր են կազմակերպվել շահառուների հայտնաբերման, նրանց կարիքների գնահատման նպատակով: Աշխատանքային թիմում ընդգրկված են չորս տնային սպասարկողներ, մեկ բուժքույր, ավագ բուժքույր, սոցիալական աշխատող, իսկ աշխատանքների համակարգումը և վերահսկողությունն իրականացնում է Կոտայքի մարզային մասնաճյուղի տնօրենը: Այցելությունների ընթացքում բացահայտված այն դեպքերը, որոնք համապատասխանում էին տնային խնամքի շահառուներին ներկայացվող պահանջներին, ուղղորդվեցին միասնական սոցիալական ծառայություն՝ պետական դրամաշնորհի շրջանակներում սպասարկվելու դիմում ներկայացնելու նպատակով: Շահառուների խնամքը սկսվել է իրականացնել ըստ կարիքի՝ երբեմն չսպասելով մինչև ուղեգրի առկայությունը, քանի որ տվյալ տարեցը ունեցել է խնամքի խիստ կարիք:<br>Նոր շահառուների հայտնաբերումը և կարիքների գնահատման գործընթացը շարունակական է եղել, քանի որ ՄՍԾ տարածքային կենտրոնի կողմից շատերի խնամքի տրամադրումը դրամաշնորհի շրջանակներում մերժվել է և անհրաժեշտություն է առաջացել նոր շահառուների ուղղորդել ուղեգրման:<br>Արդյունքում, ՀԿԽԸ Հրազդանի մարզային մասնաճյուղի կողմից եռամսյակի ընթացքում կատարվել է ևս 25 շահառուի կարիքի գնահատում, որից 16-ը ուղեգրված են և ստանում են տնային պայմաններում խնամքի ծառայություն:<br>Աշխատակազմը համալրված է, այցերը կատարվում են ըստ պլանավորված գրաֆիկի:<br>Յուրաքանչյուր շահառուի համար կազմվել է անհատական խնամքի պլան՝ ելնելով վերջինիս կարիքների առանձնահատկություններից, որի համաձայն էլ իրականացվել է խնամքի տրամադրումը: Խնամքին զուգահեռ շահառուներին այցելություններ են կատարում ՀԿԽԸ կամավորները, ովքեր օգնում են տարեցներին գրասանքի, գնումներ կատարելու, տնային բույսերի և կենդանիների խնամքի և նմանատիպ այլ հարցերում: |

Խնամքի տրամադրման գործողությունների և տրամադրված խնամքի պարագաների վերաբերյալ կատարվել են համապատասխան գրառումներ խնամառուների դինամիկ հսկողության թերթիկներում, ինչպես նաև խանամառուի անձնական թղթապանակում:
Ըստ սահմանված աշխատանքային պլանի, իրականացվել է՝
- սոցիալ-առողջապահական խնամքի տրամադրում, ներառյալ խնամքի պարագաների տրամադրում,
- կենցաղային օգնություն և սպասարկում,
- կամավորների այցելություններ,
- սոցիալական աշխատողի այցելություն, գնահատում, ուղղորդում,
- հոգեբանի խորհրդատվություն,
- մշակութային միջոցառումների կազմակերպում,
- մոնիտորինգային աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀԿԽԸ "Համայնքային ինտեգրված տնային խնամք և ակտիվ երկարակեցություն" ծրագրի համակարգողի և Կոտայքի մարզային մասնաճյուղի տնօրենի մասնակցությամբ կատարվել են մոնիթորինգային այցեր ծրագրի շահառուներին՝ խնամքի որակի և սպասարկող անձնակազմի կատարած աշխատանքների վերահսկողության, ինչպես նաև շահառուների կարծիքները և առաջարկությունները լսելու նպատակով:
Շահառուների դինամիկ հսկողության ընթացքում հայտնաբերված խնդիրներին տրվել է արագ արձագանք, կատարվել համապատասխան ուղղորդումներ:

Հունիսի 28-ին Կոտայքի մարզային մասնաճյուղը տնային խնամք ստացող խնամառուների համար կազմակերպել է ուխտագնացություն Կեչառիս Վանական Համալիր:

Բացի պլանավորված այցելություններից, պարբերաբար հեռախոսակապի միջոցով ծրագրի աշխատակիցները փորձել են իրազեկ լինել շահառուների վիճակի մասին և արձագանքել՝ ըստ անհրաժեշտության: Շարունակական են նաև կամավորների կողմից կատարվող այցերը և աջակցության տրամադրումը վերջիններիս համար գնումների կազմակերպման, զրույցի, զբոսանքի, ընթերցանության և այլ հարցերում:
2024 թ.-ի 1-ին եռամսյակի ընթացքում տնային խնամքի ծառայության շրջանակներում սպասարկվել է ընդհանուր թվով 47 շահառու, որից 30-ը՝ ուղեգրված, որոնցից 9-ը հաշմանդամություն ունեցող անձինք են:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում, ըստ սահմանված աշխատանքային պլանի, իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Սոցիալ-առողջապահական խնամքի տրամադրում՝ խնամքը տրամադրվել է խնամք իրականացնող անձնակազմի՝ բուժքույրերի միջոցով կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա: Այն ներառել է բժշկի նշանակմամբ դեղերի և բժշկական նշանակության նյութերի ստացման գործում աջակցություն, վերքերի մշակում, զարկերակային ճնշման որոշում, արյան մեջ գլյուկոզայի քանակի վերահսկում, ուղղորդում բժշկական հաստատություն՝ հետազոտման և այլն: Կարիքի դեպքում, խնամքին զուգահեռ խնամառուները ապահովվել են նաև խնամքի միջոցներով:
- Տնային խնամողների կողմից կենցաղային օգնություն և սպասարկում է տրամադրվել շահառուներին, մասնավորապես անձնական հիգիենայի պահպանում, տան մաքրում, սննդի պատրաստում, կերակրում, լվացք և կենցաղային մի շարք այլ գործառույթներ՝ կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա: Ծառայությունը տրամադրվել է տնային խնամողների կողմից:
- Կամավորների այցելություններ, ներառյալ ընկերակցում, զրույց, ընթերցանություն, գնումների իրականացում, աջակցություն մանր կենցաղային հարցերում, այլ՝ կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա: Կամավորների գործունեությունը նպաստում է նաև շահառուների սոցիալիզացիային:
- Սոցիալական աշխատողն իրականացրել է խորհրդատվության տրամադրում, գնահատում, ուղղորդում՝ տարածքային ՄՍԾ մասնագետների հետ սերտ համագործակցությամբ, կազմակերպել է երկու միջոցառում՝ ընդգրկելով ծրագրում ներառված շահառուներին:
- Շահառուների առողջական վիճակի արդյունավետ վերահսկողության համար ավագ բուժքույրը և խնամքի բուժքույրը մշտական կապի մեջ են եղել տեղամասային բժիշկների հետ: Կատարվել 4 շահառուի ուղղորդում և ուղեկցում Հրազդանի ԲԿ և պոլիկլինիկա՝ նեղ մասնագետի խորհրդատվության համար /ներզատաբանի, նյարդաբանի, թերապևտի մոտ/: Ծառայության բուժքույրը անհրաժեշտության դեպքում կապ է պահպանում տվյալ խնամառուի ընտանեկան բժշկի հետ, երբեմն խնամառուի թույլատվությամբ և խնդրանքով ստանում է դեղորայքը: Անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են բժիշկների տնային այցեր:
- ՀԿԽԸ Կոտայքի մարզային մասնաճյուղի ավագ բուժքույրը և ծրագրի համակարգողը իրականացրել են մոնիտորինգային աշխատանքներ՝ այցելելով սպասարկվող շահառուների տներ՝ գնահատելու մատուցվող ծառայությունների որակը:
- Հայկական Կարմիր խաչի ընկերությունը անդամակցում է տարեցների հարցերով միջգերատեսչական հանձնաժողովին, Տարեցների պաշտպանության ցանցին, որի հերթական հանդիպումը պլանավորված է անցկացնել ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակում, ս/թ հուլիսի 15-ին:

.                    Շահառուների շփումը և մասնակցությունը համայնքային կյանքին ապահովելու համար կազմակերպվել է ուխտագնացություն Կեչառիսի վանական համալիր՝ հաշվի առնելով շահառուների ցանկությունը:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հունիսի 28-ին Կոտայքի մարզային մասնաճյուղը տնային խնամք ստացող խնամառուների համար կազմակերպել է ուխտագնացություն Կեչառիս Վանական Համալիր, որին մասնակցել են նաև ակտիվ երկարակեցության խմբի անդամներ: Խնամքի անձնակազմի, ՀԿԽԸ կամավորների ակտիվ ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ 39 շահառուների տանել ուխտագնացության, որը և՛ հոգևոր, և՛ սոցիալական մեծ կարևորություն ունի սպասարկվող խնամառուների համար:

Կից ներկայացված են միջոցառումից մի քանի նկարներ՝





Լուսաբանման հղումը՝
https://www.instagram.com/reel/C9Poi4msnhf/?igsh=dGRodnN3NjMxNWc0



**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

| |
|---|
| Ծրագրի իրականացման ընթացքում աջաջացած խոչընդոտ կարելի է համարել թիրախային շահառուների հայտնաբերման, ընտրության և նրանց հետագա ուղեգրման գործընթացի ընթացքում միասնական սոցիալական ծառայության հետ ոչ ճկուն կամ ոչ արդյունավետ համագործակցությունը, ինչը պատճառ հանդիսացավ, որպեսզի մեծ թվով շահառուներ, ովքեր ծառայություն էին ստանում ՀԿԽԸ կողմից, չուղեգրվեցին՝ տնային խնամքի չափանիշներին չհամապատասխանելու պատճառով: Խնդիրը նրանում է, որ ՀԿԽԸ-ը Հրազդան համայնքում 2024-ի հունվար ամսին նոր է սկսել խնամքի ծառայություն մատուցել պետական դրամաշնորհի շրջանակներում, ուստի հավաքագրել և կարիքների գնահատումից հետո սպասարկել է բոլորովին նոր շահառուների, որոնց միաժամանակ ուղղորդել է ՄՍԾ՝ ուղեգրման: Շահառուների մասին ոչ բոլոր տվյալներն են հասանելի հասարակական կազմակերպությունների համար, բացի այդ, շահառուները հնարավորինս թաքցնում են որոշ տեղեկություններ՝ հնարավոր խնամքից չզրկվելու համար: Արդյունքում մոտ 50 շահառու է սպասարկվել նախորդ եռամսյակի յուրաքանչյուր ամիս, սակայն հետագայում պարզվել է, որ նրանցից 30-ն են պետության կողմից սահմանված չափանիշներին համապատասխան, և մյուսներին բնականաբար ուղեգրեր չեն տրամադրվել: Քանի որ մերժման մասին երկար ժամանակ տեղեկություն չի եղել, ՀԿԽԸ շարունակել է սպասարկել այդ շահառուներին, ակնկալիքով, որ ուղեգրում կլինի: Արդյունքում դրանք բոլորը շատ ուշացումով մերժվել են և առաջին եռամսյակը համարվել է 32 % թերակատարված, որի պատճառով կազմակերպությունը կրել է 698880 դրամի վնաս:<br>ՀԿԽԸ ակնկալում էր ավելի արդյունավետ համագործակցության ՄՍԾ սոցիալական աշխատողի և հասարակական կազմակերպությունների սոցիալական աշխատողների միջև, ինչպես նաև ՄՍԾ շահագրգռվածություն՝ համայնքում առանց խնամքի մնացած շահառուներին ծառայություններ ուղղորդելու, այս գործընթացում ներգրավելով նաև համայնքի սոցիալական աշխատողին: |

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

| |
|---|
| Հայկական կարմիր խաչի ընկերությունը շարունակելու է Կոտայքի մարզի Հրազդան համայնքում իրականացնել տնային խնամքի ծառայությունը: Խնամքի ծառայությունը իրականացվելու է նույն մեթոդաբանությամբ՝ նպաստելով տարեցների կյանքի որակի բարելավմանը: Կազմակերպվելու են միջոցառումներ, հանդիպումներ շահառուների տարբեր խմբերի համար՝ նրանց ակտիվ և արժանապատիվ կյանքի որակ ապահովելու նպատակով: |

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում նման գործողություններ չեն իրականացվել: |